



**Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИМЕНИ В. БРЮСОВА
BRUSOV STATE UNIVERSITY**

**ԲԱՆԲԵՐ
Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ВЕСТНИК ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА ИМЕНИ
В. БРЮСОВА
BULLETIN OF BRUSOV STATE UNIVERSITY**

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ПЕДАГОГИКА И СОЦИАЛЬНЫЕ НАУКИ

PEDAGOGY AND SOCIAL SCIENCES

2(55)

**Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
«ԼԻՆԳՎԱ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ**

ԵՐԵՎԱՆ - 2021

**ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ
ՍՊՈՐՏԱՅՆԱՑՈՒՄԸ. ՆՈՐ ՉԱՓՈՐՈՇԻՉ ՈՒ ԾՐԱԳԻՐ**

ԷՌՆԵՍ ԱՎԱՆԵՍՈՎ

Հիմնաբառեր՝ չափորոշիչ, ֆիզիկական կուլտուրա, նոր օրինակելի չափորոշիչ/ծրագիր, սեկցիոն մարզական պարապմունքներ, ուսուցիչների ազատականացում

Սույն հոդվածում ներկայացված են ՀՀ Ֆիզիկական կուլտուրայի դպրոցական նոր չափորոշիչ/ծրագրում ֆիզիկական դաստիարակության սպորտայնացման մեթոդիկայի ներդրման առանձնահատկությունները: Մասնավորապես անդրադարձ է կատարվում սույն ծրագրի ստեղծվման և ներդրման համատեքստում մինչ օրս իրականացված հաջորդական գործողությունների նկարագրությանը: Հատկանշական է, որ ներկայումս ավարտին է հասցվել նոր ծրագրով աշխատող վերապատրաստող ուսուցիչների վերապատրաստումը, ինչից հետո նախատեսվում է անցում կատարել ֆիզիկական կուլտուրա ուսումնական առարկայի ուսումնամեթոդական բաղադրիչի ստեղծման գործընթացին: Բացի այդ, շարժողական ակտիվություն պահանջող գործողություններին տարբեր պատճառներով չմասնակցող երեխաները կարող են ներառվել նաև օժանդակող աշխատանքներում՝ լրագրող, մարզական մեկնաբան, մարզական լուսանկարիչ, մրցավար, ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչ-մարզչի օգնական և այլն: Ֆիզիկական կուլտուրայի դպրոցական նոր չափորոշիչ/ծրագրի բուն փորձարկման գործընթացը տեղի կունենա 2021 թվականի սեպտեմբերից:

Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալներով 5-17 տարեկաններին ցուցված է օրական առնվազն 60 րոպե չափավորումից մինչև ինտենսիվ ֆիզիկական ակտիվություն: Ֆիզիկական կուլտուրայի դասերից բացի դեռահասների 31 %-ը զբաղվում է որևէ սպորտով. 11-15 տարեկանների խմբում 37 %՝ թիմային սպորտաձևերով, 27 %-ը՝ անհատական սպորտաձևերով: Զգալի մեծ թվով տղաներ՝ հարցվածների կեսը, ընդգրկված են սպորտային գործունեությունում: Ըստ տարիքի՝ ամենից շատ սպորտով զբաղվում են կրտսեր տարիքի դեռահասները (11 տարեկանների 40 %-ը զբաղված են թիմային սպորտաձևերով), և տարիքի հետ տարբեր սպորտային մարզումների հաճախող դեռահասների թիվը

պակասում է: 17 տարեկանների խմբում սպորտով զբաղվում է շուրջ 22 %-ը, աղջիկները նշանակալիորեն ավելի քիչ՝ շուրջ 12 %: Հայաստանի դպրոցահասակ երեխաների առողջության վարքագծի ազգային հետազոտության արդյունքների վերլուծության համաձայն հայ դեռահասների շրջանում առկա են բազմաթիվ առողջական գանգատներ՝ կապված ինչպես հիվանդագին վիճակների, այնպես էլ սթրեսային իրավիճակների, ինքնազնահատականի, հոգեբանական խնդիրների հետ: Դպրոցականների առողջական վիճակի համալիր գնահատման արդյունքում շաբաթական բազմակի գանգատներ ունեն 11-15 տարեկանների խմբում դեռահասների շուրջ կեսը, ավագ տարիքային խմբում՝ 63 %-ը: Բացի այդ, պարզվում է, որ տարիքի հետ գանգատների հաճախականությունը նշանակալիորեն բարձրանում է, իսկ բոլոր տարիքային խմբերում ավելի մեծ թվով աղջիկներն են ունենում բազմակի գանգատներ (Մելքումովա, Մովսիսյան, Սարգսյան, Բաբլոյան 2019: 26-27):

Այս և այլ տվյալները հիմնավորում են հատկապես սովորողների շրջանում առողջական վիճակի տարեցտարի վատթարացման միտումները: Դպրոցականների դեպքում առողջական վիճակի բարելավմանը կարող են նպաստել ֆիզիկական վարժությունները, որոնք պարբերաբար իրականացվում են ֆիզիկական կուլտուրայի դասերի ընթացքում: Սակայն ներկայիս դասերն այդքան էլ հետաքրքիր չեն դպրոցականների համար, ինչի պատճառով նրանք հաճախակի բացակայում են այդ դասերից (Ավանեսով 2014: 14): Ուստի, նաև հիմնվելով մեր հետազոտությունների տվյալների վրա, նոր չափորոշիչ/ծրագրի ստեղծման կարիք կա, ինչի ուղղությամբ մեր աշխատանքները համառոտ ներկայացված են սույն հոդվածում:

ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 4-ի նիստում հաստատվել է Հանրակրթության պետական չափորոշիչը (ՀՊՉ), որն ամբողջությամբ ուժի մեջ կմտնի 2023 թվականից: Հաստատված հանրակրթության պետական նոր չափորոշիչով անգամ սահմանված է, որ տարրական ծրագրի շրջանավարտը պետք է դրսևորի իր մտավոր և ֆիզիկական կարողությունները շարունակաբար զարգացնելու վարքագիծ: Բացի այդ ըստ ՀՊՉ-ի հանրակրթական հիմնական ծրագրի շրջանավարտը մի շարք վերջնարդյունքների հետ մեկտեղ պետք է ճանաչի սեփական ֆիզիկական հնարավորությունները և դրանց համապատասխան զարգացնի իր շարժողական ընդունակությունները: Դրա հետ մեկտեղ հանրակրթական միջնակարգ ծրագրի շրջանավարտը պետք է բացատրի ֆիզիկական ակտիվության կարևորությունը և մարզվի իր նախընտրած ձևով (Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի N 439-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծ):

Հանրակրթական ծրագրերի բովանդակությունը ներկայացվում է 7 ուսումնական բնագավառներով, որոնցից մեկը «Ֆիզիկական կրթություն և անվտանգ կենսագործունեություն» բնագավառն է, որը ներառում է մի քանի առարկաներ և ինտեգրված ուղղություններ. ֆիզիկական կուլտուրա, ՆԶՊ, շախմատ, որոնք պետք է ապահովեն սովորողների ֆիզիկական դաստիարակությունը, նպաստեն նրանց մոտ անհրաժեշտ շարժողական ակտիվության ապահովմանը, մկանային ուժի, արագաշարժության, ճկունության, շարժումների կորդինացիայի, դիմացկունության, հավասարակշռության, ճարպկության, դիպուկության, տարածական կողմնորոշման ձևավորմանն ու կատարելագործմանը: Կարևորվում են առողջությանը նպաստող վարքագծի, սեփական անձի և մյուսների ֆիզիկական և հոգեկան առողջությանը միտված պատասխանատու վարքագծի ձևավորումը, անվտանգ կենսակերպը, համակողմանի զարգացած և ներդաշնակ, սեփական ուժերի հանդեպ վստահություն ունեցող, արտակարգ և փոփոխվող իրավիճակներում (այդ թվում՝ մարտական) կողմնորոշվելու և կենսապահովումն իրականացնելու, գնահատելու, լուծման ուղիներ և տարբերակներ գտնելու, հստակ գործելու ունակ, նախաձեռնողական և մի շարք այլ բարոյականային դրական հատկանիշներ ունեցող անձի ձևավորումը (Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի N 439-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծ):

Այս ամենի հիմքի վրա ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը հաջորդաբար կհաստատի առարկայական ծրագրերն ու չափորոշիչները՝ այդ թվում ֆիզիկական կուլտուրայի չափորոշիչն ու ծրագիրը:

Ընդանուր առմամբ 2022 թվականին նախատեսվում են լայնածավալ բարեփոխումներ Հայաստանի հանրակրթական դպրոցներում: Այդ փոփոխություններն ու նորարարությունները վերաբերում են նաև դպրոցականների ֆիզիկական դաստիարակության գործընթացին (Ֆիզիկական կուլտուրայի օրինակելի պետական չափորոշիչ և ծրագիր):

Մինչ այդ մեր կողմից հիմնավորվել էր դպրոցականների ֆիզիկական կուլտուրայի դասերի սպորտայնացման մեթոդիկայի արդյունավետությունը (Ավանետով 2014: 24):

Նոր մեթոդիկայի գործնական նշանակությունը որոշվում է դպրոցականների ֆիզիկական դաստիարակության գործընթացում սպորտային տարրերի ակտիվ ներդրմամբ, ինչը թույլ է տալիս զգալի բարելավել սովորողների շարժողական պատրաստվածության մակարդակը: Տվյալ մոտեցման ներդրումը դպրոցականների շրջանում կնպաստի նրանց շարժողական ընդունակությունների լավացմանը: Բացի այդ, սպորտայնացված ֆիզիկական դաստիարակության գործընթացում

առաջարկվող ֆիզիկական վարժությունների ֆիզիոլոգիական բեռնվածությունը դրական է ներգործել սովորողների օրգանիզմի ֆունկցիոնալ հնարավորությունների վրա, ինչի արդյունքում բարելավվում է նաև նրանց առողջական վիճակը:

Հայաստանի հանրակրթական դպրոցների ֆիզիկական կուլտուրայի չափորոշիչի և ծրագրի նոր նախագծում ներդրվել են այդ գործընթացի սպորտայնացման տարրեր:

Մասնավորապես կուտակված փորձի հիման վրա, ինչպես նաև գիտական հետազոտությունների արդյունքներով փորձ է արվել ուսուցիչներին ազատել ուսումնական ծրագրի խիստ սահմանափակումներից, ինչի արդյունքում յուրաքանչյուր ուսուցիչ կունենա ֆիզիկական դաստիարակության միջոցների և մեթոդների ազատ ընտրության իրավունք՝ հիմնվելով դպրոցականների սպորտային հետաքրքրությունների, նախընտրությունների և ընդունակությունների վրա, ինչպես նաև հաշվի առնի համապատասխան ուսումնական հաստատությունների հնարավորությունները: Տվյալ գործընթացի կազմակերպման համատեքստում չի բացառվում նաև մարզական բազա ունեցող տարբեր հաստատությունների հետ համագործակցությունը:

COVID-19-ի հետ կապված հեռավար դասերի կազմակերպման կուտակված փորձը թույլ տվեց մարզումների այդ ձևաչափին ընդգրկել ուսումնական գործընթացի կազմակերպման ձևերի մեջ: Ֆիզիկական դաստիարակության գործընթացի հեռավար կազմակերպման դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել երեխաների կարանտինային օրվա ռեժիմը և ընտրել վարժություններն այնպես, որպեսզի դրանք շարժողական ընդունակությունների կատարելագործման արդյունավետությամբ չզիջեն ֆիզիկական կուլտուրայի առկա դասերին:

Դպրոցականների առավել մեծ քանակի ընդգրկման, ֆիզիկական կուլտուրայի նյութերի հասանելիության նպատակով նոր ծրագրի ընդհանուր է առնում նաև ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հնարավորությունը, ինչը հատկապես կնպաստի ֆիզիկական դաստիարակության վերաբերյալ տեսական գիտելիքների յուրացմանը:

Թիմի լիարժեք անդամ զգալու նպատակով այն երեխաները, որոնք տարբեր պատճառներով չեն մասնակցի շարժողական ակտիվություն պահանջող գործողություններին, կարող են ներառվել նաև օժանդակող աշխատանքներում որպես մարզական լրագրող, մարզական մեկնաբան, մարզական լուսանկարիչ, մրցավար, ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչ-մարզչի օգնական և այլն:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող և տարբեր բժշկական խմբերում ընդգրկված երեխաները ևս պետք է սեփական ֆիզիկական հնարավորությունները ճանաչելու և դրանց համապատասխան

իրենց շարժողական ունակությունները զարգացնելու հնարավորություն ունենան:

Ֆիզիկական կուլտուրայի նոր ծրագրի կարևոր նորարամուծություններից է երեխաների մարզական հետաքրքրությունների հաշվի առնելն ուսումնական գործընթացում: Դա հնարավոր է հատկապես 8-րդ դասարանից սկսած, որտեղ ուսուցիչը ֆիզիկական դաստիարակության գործընթացում պետք է հաշվի առնի դպրոցականների մարզական նախընտրությունները՝ չսահմանափակվելով ծրագրում նշված մարզման ձևերով: Բացի այդ, ուսուցիչը հնարավորություն ունի մարզման ձևն ու ժամաբաշխումն իրականացնելու ըստ անհրաժեշտության՝ ապահովելով ծրագրով ներկայացված վերջնարդյունքները:

Ընտրովի ուսումնական նյութին վերաբերող վերջնարդյունքների ապահովումը պարտադիր է միայն համապատասխան մարզաձևի մարզումների հնարավորության դեպքում:

Ֆիզիկական դաստիարակության գործընթացում սովորողների հետաքրքրությունները հաշվի առնելու մեթոդաբանական հիմքերն են. մարզական ուղղվածության (սպորտայնացված) ֆիզիկական դաստիարակության կազմակերպման սկզբունքները: Վերջիններս ապահովում են յուրաքանչյուր դպրոցականի համար մարզական կուլտուրայի յուրացումը նրա հնարավորություններին, կարողություններին և անձնային կողմնորոշմանը համապատասխան, սպորտայնացված ֆիզիկական դաստիարակության շրջանակում պարտադիր է մարզական տեխնոլոգիաների և առողջարարական մարզումների կազմակերպումը, դպրոցական ֆիզիկական կուլտուրայի դասերի սպորտայնացման գործընթացում տեղի է ունենում սովորողների խմբավորումն ուսումնամարզական խմբերում՝ միևնույն հետաքրքրություններով, պահանջմունքներով, հավակնություններով, ֆիզիկական պատրաստականությամբ, տիպաբանական առանձնահատկություններով և կենսաբանական հասունության աստիճանով, դպրոցահասակ երեխաներին այդ ուսումնամարզական պարապմունքներում ընդգրկվելու համար արդյունավետ նախադրյալներ է ստեղծում: Դա իր հերթին մեծ հնարավորություն է ընձեռում մարզական կողմնորոշման ու ընտրության համար, նպատակաուղղված է մարզական պարապմունքների դրդապատճառների և հետաքրքրության ձևավորմանը:


Ֆիզիկական կուլտուրայի ուսուցման դաս-դասարանային ձևով կազմակերպված դասերից զատ, սույն ծրագրի վերջնարդյունքների առավել ամբողջական ապահովումը կիրականացվի սովորողների մարզական նախընտրությամբ պարտադիր արտաուսումնական մարզումների հաճախելով:

Սպորտայնացված դասեր կազմակերպելիս կարելի է առաջնորդվել մանկապատանեկան մարզադպրոցի համապատասխան մարզաձևերի համար նախատեսված ծրագրերով, իսկ այդ ընթացքում դպրոցականների բեռնվածությունն անհրաժեշտ է պլանավորել այդ նույն ծրագրի հիման վրա, սակայն մեկ աստիճան ցածր: Ի տարբերություն մարզադպրոցների դպրոցականների մարզական ուղղվածության՝ ֆիզիկական դաստիարակության գործընթացը պետք է կրի առողջարարական բնույթ: Սպորտայնացված ֆիզիկական դաստիարակության գործընթացը հնարավոր է կազմակերպել նաև այլընտրանքային, հեղինակային, լիազոր մարմնի կողմից երաշխավորված, հաստատված ծրագրերի շնորհիվ:

Ինչպես երևում է հաջորդիվ ներկայացված գծապատկերից, տվյալ մոտեցումն ունի ներգործության բազմաթիվ դրական կողմեր և թույլ է տալիս մանկավարժական գործընթացում յուրաքանչյուր սովորողին տարբեր մարզաձևերի ու ֆիզկուլտուրային-առողջարարական խմբային պարապմունքների միջոցով հնարավորինս բացահայտել սեփական ունակությունները, ձևավորել հասարակական կյանքում անհրաժեշտ բազմաթիվ հատկություններ, բավարարել ֆիզկուլտուրայի և մարզական հետաքրքրություններն ու պահանջները, ինչպես նաև՝ իրենց առողջական վիճակը (տես՝ Գծապատկեր 1):

Գծապատկեր 1¹. Դպրոցականների սպորտայնացված (ընտրած մարզման ձևի վրա հիմնված) ֆիզիկական դաստիարակության ներգործության հիմնական ուղղությունները

¹ Գծապատկերը մշակվել է հոդվածի հեղինակի կողմից:



Այսպիսով, նոր ծրագիրը բացի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին տեսական գիտելիքներից ու ավանդական ֆիզիկական կուլտուրայի դասերից ենթադրում է նաև մարզումային խմբերի ձևավորում, որտեղ

մարզման ձևն ընտրում է դպրոցականը: Բացի այդ նախատեսվում են նաև հեռավար դասեր՝ այդ թվում ֆիտնես տեխնոլոգիաների կիրառմամբ:

Արդեն ավարտվել է նոր ծրագրով աշխատող վերապատրաստող ուսուցիչների վերապատրաստումը, որին կհաջորդի առարկայից ուսումնամեթոդական բաղադրիչի ստեղծման գործընթացը: Ֆիզիկական կուլտուրայի դպրոցական նոր չափորոշիչ/ծրագրի բուն փորձարկման գործընթացը նախատեսվում է 2021 թվականի սեպտեմբերից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ավանեսով Է., Դպրոցականների շարժողական պատրաստության մարզական ուղղվածության մեթոդիկական, Մանկ. գիտ. թեկն. ... սեղմագիր, Երևան, ԵՊՀ, 2014, 24 էջ:
2. Մելքումովա Մ., Մովսիսյան Ե., Սարգսյան Ս., Բաբլոյան Ա. Հայաստանի դպրոցահասակ երեխաների առողջության վարքագծի 2017/2018թթ. Ազգային հետազոտության արդյունքների վերլուծություն / «Արաբկիր» բժշկական համալիր-Երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտ, 2019, 42 էջ:
3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի N 439-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծ
Հասանելի է՝ <https://www.e-draft.am/projects/2560/about> (18.01.2021):
4. Ֆիզիկական կուլտուրայի օրինակելի պետական չափորոշիչ և ծրագիր
Հասանելի է՝ <http://escs.am/am/news/6711> (22.01.2021):

REFERENCES

1. Avanesov E'. Dprocakanneri sharjhoghakan patrastowt'yan marzakan owghghvac'owt'yan met'odikan: Mank. git. t'ekn. ... seghmagir, Er&an: EPH, 2014.–24 e'j:
2. Melqowmova M., Movsisyan E., Sargsyan S., Babloyan A. Hayastani dprocahasak erexaneri ar'oghjowt'yan varqagc'i 2017/2018t't'. Azgayin hetazotowt'yan ardyownqneri verlowc'owt'yown / «Arabkir» bjhshkakan hamalir-Erexaneri & der'ahasneri ar'oghjowt'yan institowt, 2019, 42 e'j:
3. Hayastani Hanrapetowt'yan kar'avarowt'yan 2010 t'vakani aprili 8-i N 439-N oroshman mej p'op'oxowt'yownner katarelow masin HH kar'avarowt'yan oroshman naxagic'
Hasaneli e" <https://www.e-draft.am/projects/2560/about> (18.01.2021):
4. Fizikakan kowltowrayi o'rinakeli petakan chap'oroshich & c'ragir
Hasaneli e" <http://escs.am/am/news/6711> (22.01.2021):

ЭРНЕСТ АВАНЕСОВ - СПОРТИЗАЦИЯ ФИЗИЧЕСКОГО ВОСПИТАНИЯ ШКОЛЬНИКОВ: НОВЫЙ СТАНДАРТ И ПРОГРАММА

Ключевые слова: *государственный стандарт, примерная программа по физической культуре, секционные спортивные занятия, либерализация преподавателей*

В статье представлены особенности внедрения методики спортизированного физического воспитания в новый стандарт по физической культуре школ РА. В частности рассматриваются последовательные действия, которые осуществлялись до сегодняшнего дня в контексте создания и внедрения данной программы. Сама программа будет апробирована с сентября 2021 года.

ERNEST AVANESOV - SPORTIFICATION OF PHYSICAL EDUCATION OF SCHOOLCHILDREN: NEW STANDARD AND PROGRAM

Keywords: *state standard, model curriculum of physical education, sectional sport trainings, liberalization of teachers*

The article presents the peculiarities of introducing the methodology of sportification of Physical Education into the new school curriculum/program of Physical Education, RA. In particular, reference is made to the description of successive actions taken to date, within the context of developing and implementing this program. The testing of the program is scheduled for September 2021.

Ներկայացվել է՝ 16.02.2021
Գրախոսվել է՝ 15.02.2021